ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 646-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 218-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի մարտի 16-ի «Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ծառայողների պաշտոնի նշանակման համար վերապատրաստման կարգը հաստատելու մասին» N 218-Լ որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) 15-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.1-ին կետով՝

«15.1. Թեստավորմանը մասնակցելու ժամանակահատվածը թեստավորման մասնակիցների համար համարվում է աշխատանքից հարգելի բացակայություն:».

2) 41-րդ կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 41.1-ին կետով՝

«41.1. Հարցազրույցին մասնակցելու ժամանակահատվածը հարցազրույցի մասնակիցների համար համարվում է աշխատանքից հարգելի բացակայություն:».

3) 42-րդ կետում «մեկ» բառը փոխարինել «երկու» բառով.

4) 43-րդ կետը՝

ա. շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«43. Հարցազրույցի փուլն անցկացնելու համար Ներքին գործերի նախարարի (այսուհետ՝ նախարար) հրամանով ձևավորվում են հարցազրույց անցկացնող երկու առանձին հանձնաժողովներ՝ ծառայության պետի և ծառայության պետի տեղակալի նախագահությամբ: Հանձնաժողովների կազմերում ընդգրկվում են Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի մեկական ներկայացուցիչ, Ներքին գործերի նախարարության երկուական ներկայացուցիչ, սույն կարգի 7-րդ կետով հաստատված դասընթացի մոդուլի թեմայով վերապատրաստում իրականացնող մասնագետներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:»,

բ. լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 43.1-ին, 43.2-րդ, 43.3-րդ, 43.4-րդ և 43.5-րդ կետերով՝

«43.1. Հանձնաժողովի աշխատանքներում կարող են ընդգրկվել միգրացիայի և քաղաքացիության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների և ոլորտում վերջին հինգ տարվա ընթացքում առնվազն երեք տարվա գործունեության փորձ ունեցող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

43.2. Միջազգային կազմակերպությունները և հասարակական կազմակերպություններն ընտրվում են ծառայության կողմից:

43.3. Ծառայության պետի հրամանով հաստատվում է այն միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ցուցակը, որոնք մասնակցելու են հանձնաժողովի աշխատանքներին:

43.4. Հանձնաժողովն իրավազոր է, եթե հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում է առնվազն հինգ անդամ:

43.5. Եթե հանձնաժողովն իրավազոր չէ, ապա հարցազրույցի անցկացման սահմանված օրվանից ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում ծառայության պետի հրամանով նշանակվում է նոր հարցազրույց:».

5) 44-րդ կետի՝

ա. 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Համակարգող հանձնաժողովից ստանում է հարցազրույցի մասնակիցների ցուցակը, նրանց թեստավորման արդյունքները, վերապատրաստում իրականացնող մասնագետների կազմած հարցազրույցի հարցերը (առաջադրանքները), հանձնաժողով ձևավորելու մասին իրավական ակտի օրինակը, հարցազրույցի մասնակիցների հարցազրույցի գնահատման թերթերը.»,

բ. 7-րդ ենթակետում «գլխավոր քարտուղարին» բառերը փոխարինել «ծառայության պետին» բառերով.

6) 54-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«54. Մասնակիցը համարվում է հարցազրույցի փուլը հաղթահարած, եթե հավաքել է հանձնաժողովի անդամների թվին համապատասխան գնահատման ամենաբարձր միավորների հանրագումարի կեսից ավելի միավորին համարժեք տոկոսը:».

7) 56-րդ կետը «արդյունքները» բառից հետո լրացնել «՝ տոկոսային արտահայտությամբ» բառերով.

8) 57-րդ, 58-րդ և 59-րդ կետերում «ծառայության պետ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «նախարար» բառով և դրա համապատասխան հոլովաձևերով.

9) 62-րդ կետը «թվաբանականը» բառից հետո լրացնել «՝ տոկոսային արտահայտությամբ» բառերով.

10) Ձև 1-ի՝

ա. 1-ին տողում «նախապես հրապարակված իրավական ակտերի շրջանակից» բառերը փոխարինել «դասընթացի մոդուլի թեմաների» բառերով,

բ. 3-րդ տողի «Հիմնական հարցեր» կետը լրացնել «Իրավիճակային երկու խնդիր, որոնք բխում են դասընթացի մոդուլի թեմաներից» բառերով.

11) Ձև 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

18.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ